Միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի 2016թ. կատարած աշխատանքների հաշվետվություն

Հաշվետու ժամանակահատվածում միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կողմից գործուղումների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումները (37 ծառայողների 14 գործուղումներ).

1. 2016թ. մարտի 1-ից 4-ը Վրաստանի Թբիլիսի քաղաքում կայացած «Կանայք ոստիկանությունում» թեմայով համաժողով (1 ծառայող):
2. Արևելյան գործընկերության ոստիկանական համագործակցության ծրագրի շրջանակներում Լեհաստանի մայրաքաղաքում՝ Վարշավայում 2016թ. մարտի 15-ից 18-ը կայացած «Փորձաքրեագիտություն» թեմայով միջազգային համաժողով (1 ծառայող) և մարտի 21-ից 25-ը կայացած «Տնտեսական հանցագործությունների դեմ պայքար (փողերի լվացում)» թեմայով սեմինար (2 ծառայող):
3. Արևելյան գործընկերության ոստիկանական համագործակցության ծրագրի շրջանակներում 2016թ. հունիսի 21-ից 22-ը Գերմանիայի Վիսբադեն քաղաքում կայացած «Կոռուպցիա և էթիկա» թեմայով սեմինար (1 ծառայող):
4. 2016թ. հուլիսի 6-ից 9-ը Լեհաստանի Շիթնոյի ոստիկանական ակադեմիա ճանաչողական այց (2 ծառայող):
5. 2016թ. հուլիսի 25-ից 29-ը Վրաստանի ՆԳՆ ակադեմիա ճանաչողական այց (4 ծառայող):
6. 2016թ. օգոստոսի 10-ից 16-ը Շվեյցարիայի Անդերմաթ քաղաքում մասնակցություն ուսուցանողների ուսուցման 5-րդ տարեկան դասընթացին (2 ծառայող):
7. 2016թ. սեպտեմբերի 6-ից 8-ը Ռուսաստանի Դաշնության Վոլգոգրադ քաղաքում կայացած «Ոստիկանական կադրերի պատրաստման փորձն ու ավանդույթները» թեմայով սեմինար (2 ծառայող):
8. ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից 2016թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ը Ծաղկաձորում կազմակերպված «Ժողովրդավարական ոստիկանություն» թեմայով վերապատրաստման դասընթաց (30 ծառայող, այդ թվում 28 սովորող):
9. 2016թ. նոյեմբերի 14-ից 18-ը Վրաստանի Թբիլիսի քաղաքում կայացած «Դեպքի վայրի զննությունը և պահպանումը» թեմայով դասնթաց (10 ծառայող, այդ թվում 8 սովորող):
10. 2016թ. նոյեմբերի 16-ից 18-ը Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում կայացած ԱՊՀ մասնակից պետությունների ՆԳՆ (ոստիկանության) բարձրագույն ուսումնական հաստատությունների ասոցացիայի մասնակից բուհերի ռեկտորների ամենամյա հավաք (1 ծառայող):
11. 2016թ. նոյեմբերի 24-ից 25-ը Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում կայացած «Կառավարումը ոստիկանությունում, կառավարման ստանդարտները» թեմայով սեմինար (1 ծառայող):
12. 2016թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 5-ը Ռուսաստանի Դաշնության ՆԳՆ Վ. Յ. Կիկոտի անվան Մոսկվայի համալսարանում կայացած «Երիտասարդների իրավական դաստիարակություն. ընտանիք և հասարակություն» թեմայով միջազգային համաժողով և կրթական հաստատությունների միջև համագործակցության արձանագրության ստորագրում (3 ծառայող):

13. 2016թ. դեկտեմբերի 5-ից 8-ը Ռուսաստանի Դաշնության ՆԳՆ Սանկտ Պետերբուրգի համալսարանի և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի միջև համագործակցության արձանագրության ստորագրում (2 ծառայող):

14. 2016թ. դեկտեմբերի 5-ից 8-ը Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում կայացած «Ոստիկանության դերը խտրականությունների դեմ պայքարում» թեմայով սեմինար (1 ծառայող):

15. 2016թ. դեկտեմբերի 13-ից 15-ը Չինաստանի Պեկին քաղաքում կայացած «Միջազգային իրավունքի պարտադրման ոլորտում համագործակցություն և ոստիկանության ուսուցումը» թեմայով սեմինար (1 ծառայող):

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն ապահովել է միջազգային պատվիրակությունների այցելությունների հետ կապված թարգմանչական աշխատանքները:

Բաժնի կողմից կազմակերպվել են հետևյալ միջազգային միջոցառումները.

1. 2016թ. մայիսի 31-ից հունիսի 4-ը կայացած ՆԳՆ (ոստիկանության) ղեկավար կազմի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման հարցերով ԱՊՀ մասնակից պետությունների ՆԳՆ (ոստիկանության) բարձրագույն ուսումնական հաստատությունների ասոցիացիայի ամենամյա սպարտակիադա և «Ոստիկանության կրթական հաստատություններում աշխատակիցների մասնագիտական պատրաստման հիմնական ուղղությունները» թեմայով միջազգային գիտագործնական համաժողով:
2. 2016թ. հոկտեմբերի 11-ից 13-ը կայացած «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի քրեաիրավական, քրեաբանական և քրեագիտական ասպեկտները» թեմայով միջազգային գիտագործնական համաժողով:

Կրթության և գիտական գործունեության ոլորտում համագործակցության մասին արձանագրություններ են ստորագրվել ՌԴ ՆԳՆ հետևյալ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝

- ՌԴ ՆԳՆ Նիժնի Նովգորոդի ակադեմիա,
- ՌԴ ՆԳՆ աշխատակիցների որակավորման բարձրացման համառուսաստանյան ինստիտուտ,
- ՌԴ ՆԳՆ Վ. Յ. Կիկոտի անվան Մոսկվայի համալսարան,
- ՌԴ ՆԳՆ Սանկտ Պետերբուրգի համալսարան:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել Լեհաստանի Հանրապետության ՆԳՆ Շիթնոյի ոստիկանական ակադեմիայի հետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ:

Բաժինը համակարգել է միջազգային ոստիկանական համագործակցության շրջանակներում իրականացված հետևյալ դասընթացները (10 դասընթացներում կրթահամալիրի 30 ծառայողների մասնակցություն).

1. Արևելյան գործընկերության ոստիկանական համագործակցության ծրագրի շրջանակներում 2016թ. հունվարի 18-ից 20-ը կայացած «Անդրսահմանային տնտեսական հանցագործությունների նոր մեթոդների ուսումնասիրում» թեմայով դասընթաց:

2. 2016թ. հուլիսի 20-ից 21-ը Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկման ԺՆևի կենտրոնի փորձագետների կողմից անցկացված «Վերապատրաստումը և մասնագիտական կատարելագործումը» թեմայով դասընթաց:
3. 2016թ. սեպտեմբերի 13-ից 14-ը ԶՈՒԺՎ ԺՆևի կենտրոնի փորձագետների կողմից անցկացված «Ժողովրդավարական ոստիկանություն՝ հավասար իրավունքներ և հնարավորություններ» թեմայով դասընթաց:
4. Արևելյան գործընկերության ոստիկանական համագործակցության ծրագրի շրջանակներում 2016թ. սեպտեմբերի 26-ից 29-ը կայացած «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար» թեմայով դասընթաց:
5. Արևելյան գործընկերության ոստիկանական համագործակցության ծրագրի շրջանակներում 2016թ. հոկտեմբերի 18-ից 20-ը «Մասնագիտական էթիկա/կոռուպցիայի դեմ պայքար» թեմայով դասընթաց:
6. 2016թ. հոկտեմբերի 17-ից 21-ը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից կազմակերպված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում Darknet տեղեկատվական համակարգի ուսուցում» թեմայով դասընթաց:
7. 2016թ. նոյեմբերի 23-ից 24-ը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից կազմակերպված «Ոստիկանության կառավարման մեթոդը և պրակտիկան» թեմայով սեմինար:
8. 2016թ. նոյեմբերի 23-ից 25-ը ՀՀ Պաշտպանության նախարարության և ՆԱՏՕ-ի հովանավորությամբ «Գործադիր առաջնորդությունը հանրային ոլորտում» թեմայով սեմինար:
9. Արևելյան գործընկերության ոստիկանական համագործակցության ծրագրի շրջանակներում 2016թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 2-ը կայացած «Կիբեռհանցավորության դեմ պայքարի նոր մեթոդների ուսումնասիրում» թեմայով դասընթաց:
10. Արևելյան գործընկերության ոստիկանական համագործակցության ծրագրի շրջանակներում 2016թ. դեկտեմբերի 5-ից 8-ը «Թմրամիջոցների օրինական շրջանառություն» թեմայով դասընթաց:

Բաժնի կողմից կազմակերպվել են «Կրթություն և կարիերա EXPO 2016» և «Կրթություն XXI դար» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսներին կրթահամալիրի մասնակցությունը:

Բաժնի կողմից ապահովվել է «edupolice.am» կայք-էջի տեղեկատվական համալրվածությունը, կրթահամալիրում տեղի ունեցող գիտական, մշակութային և այլ բնույթի տեղեկությունների լուսաբանումը (անհրաժեշտության դեպքում նաև անգլերեն և ռուսերեն թարգմանություններով):

Հաշվետու ժամանակահատվածում բաժինը պատշաճ կերպով պատասխանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ էլեկտրոնային փոստով ստացված նամակներին: